

զնա՝ ապրեցաւ ի մահուանէ: 50 Այլ իբրեւ լուան զաւրքն Պարսից՝ զոր թողեալ էր Մերուժանայ ի գաւառն Կորճեից՝ թէ սատակեցաւ Մերուժանն, եւ կորեաւ գունդն որ ընդ նմա, եւ ինքեանք ի Պարսից երկիրն փախստական զնացին, եւ Յայոց երկրին լինէր խաղաղութիւն բազում:

ԳԼՈՒԽ ԽԴ.

1 Յաղագս թէ զիա՛րդ թագաւորեցոյց Մանուէլ սպարապետն զմանուկն Արշակ, եւ ապա ինքն Մանուէլն մահու մեռանէր:

2 Ապա յետ այսր ամենայնի զաւր արարեալ զաւրավարն սպարապետն¹ Մանուէլ, հանդերձ Արշակունի տիկնաւն, եւ մանկամբքն երկոթումբք՝ Արշակաւն եւ Վաղարշակաւն, հանդերձ ամենայն բանակաւն Յայոց մեծամեծ աւագայնովն նախարարաւքն եկեալ² հասանէր ի գաւառն Կարնոյ. եւ ամենայն տանուտեարք ընդ նմա: 3 Եւ տայր սպարապետն Մանուէլ զդուստր իւր Վարդանդուխտ կին Արշակայ մանկանն Արշակունոյ, եւ փեսայ իւր առնէր զնա: 4 Առնէր հարսանիս եւ եղբար Նորին Վաղարշակայ, եւ տայր նմա զդուստր ասպետին Բագրատունոյ ի Սպեր գաւառէ, որ թագաւորքն թագակապքն լեալ էին ի բնմէ ազգին թագաւորութեանն Արշակունոյ. եւ մեծապէս արարեալ զհարսանիսն ամենայն երկիրն Յայոց, ցնծացեալք ինդացեալք էին ընդ այն մեծ խնդութիւն ուրախութեանն: 5 Ապա յետ այսորիկ դարձեալ ի մի վայր ժողովեալ զաշխարհ ամենայն զմարդիկ երկրին Յայոց, եւ թագաւորեցոյց զմանուկն զԱրշակ երկրին Յայոց, եւ զՎաղարշակ երկրորդ նմին: 6 Եւ ընդ այն եւս ցնծացեալ՝ առնէին մեծապէս ուրախութիւն եւ ցնծութիւն ամենայն երկիրն Յայոց:

7 Ապա յետ այսորիկ հիւանդացաւ սպարապետն զաւրավարն Յայոց Մանուէլ զախտ հիւանդութեան մահու. եւ կոչեաց զորդի իւր զԱրտաշիւր, եւ ետ նմա զտերութիւն իւր եւ զսպարապետութիւն զաւրավարութեանն իւրոյ: 8 Եւ պատուիրէր նմա հնազանդ հպատակ կալ արքային Արշակայ, եւ լինել միամիտ. ջանալ եւ վաստակել, եւ տալ պատերազմ փոխանակ աշխարհին Յայոց զանձն քո, որպէս քաջ նախնիքն ի վերայ աշխարհին մտադիւր մեռանել: 9 Չի, ասէ, առ Աստուած այն արդարութիւն մեծ է եւ ընդունելի. եւ ոչ Աստուած թողու ի ձեռաց, յորժամ այնպէս լինիք: 10 Անուն քաջութեան յերկրի թողցուք, եւ զարդարութիւն յերկինս ընծայեցուցանէք. եւ ամենեւին ի մահուանէ մի՛ երկնչիք, այլ յուսասջիք յայն որ զամենայն արար եւ հաստատեաց: 11 Եւ զնենգութիւն եւ զպղծութիւն եւ զչարութիւն յանձանց ձերոց³ ի

1 *Օրինակ մի՝ սարապետին*

2 *Տպ. երեւեալ*

3 *Օրինակ մի յաւելու՝ թօթափեցեք եւ*